

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Տեղեկատվական-նախագծային տեխնոլոգիայի կիրառման մեր
փորձը տարրական դասարաններում

ԱՌԱՐԿԱ ԴԱՍՎԱՐ (ՄԱՅՐԵՆԻ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱ)

ՀԵՂԻՆԱԿ Գրիգորյան Վարդ Ռազմիկի

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Գրիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3
հիմնական դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. Ռ. Բաղդազյուլյան, ԳՊՀ դասախոս

ԳՈՐԻՍ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն.....	3
2. Նախագծային տեխնոլոգիայի կազմակերպման առանձնահատկությունները դարբանական դասարաններում.....	5
3. Տեղեկատվական նախագծի իրականացման մեր փորձը տարբարական դասարանում.....	9
4. Եզրակացություններ.....	17
5. Գգտագործած գրականության ցանկ.....	19
6. Հավելված 1.....	20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական նախագիծը ուսումնաճանաչողական, ստեղծագործական կամ խաղային համատեղ գործունեության տեսակ է սովորող-գործընկերների միջև, որոնք ունեն ընդհանուր նպատակ և համաձայնեցված միջոցներ՝ ուղղված որևէ խնդրի լուծման կամ որոշակի ձևակերպման:

Այն հնարավորություն է տալիս սովորողին բացահայտելու իր մեջ եղած ստեղծագործական ներուժը: Խմբային աշխատանքների՝ նախագծերի իրականացման պարագայում այն առաջարկում է մի շարք խնդիրների լուծումներ, ինչպես նաև զարգացնում է սովորողների մոտ ինչպես ինքնուրույն, այնպես էլ թիմային աշխատանք կազմակերպելու հմտություն: Ուսուցման նախագծային համակարգի հիմնական արժեքն այն է, որ այն աշակերտներին ուղղորդում է ոչ թե որոշակի թեմայի պարզ ուսումնասիրության, այլ կրթական արդյունք ստեղծելու գործընթացին:

Նախագծային ուսուցումը արդյունավետ ուսուցման գաղափարի գործնական իրականացման ձևերից մեկն է: Արդյունավետ ուսուցումը, ի տարբերություն ավանդական ուսուցման, գործընթացի արդյունքում ունի արդյունավետ գործունեության անհատական փորձ:

Այս տեխնոլոգիայի հիմքում դրված են Ջոն Դյուի մանկավարժական գաղափարները: Նա համարում էր, որ ուսուցումը պետք է հիմնվի աշակերտների համար հետաքրքրություն ներկայացնող կյանքից բխող հարցերի վրա: Դյուիի այս գաղափարները հետագա զարգացում ստացան անցյալ դարի 20-ական թվականներին:

Հետազոտական աշխատանքի թեման արդիական է, քանի որ ժամանակակից մանկավարժության մեջ նախագծային ուսուցումը կրթության գործընթացի զարգացման կարևորագույն միջոցներից է համարվում: Հանդիսանալով ուսուցման նորարարական մոտեցում՝ նախագծային ուսուցումը լայն ճանաչում և կիրառություն է գտել ողջ աշխարհում՝ որպես կրթության գործնական – կողմնորոշիչ մեթոդաբանություն:

Հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել տեղեկատվական նախագծային տեխնոլոգիայի դերը կրտսեր դպրոցականի մեջ որոնելու,

ստեղծագործելու, հետազոտելու, տեղեկույթը հավաքագրելու, համակարգելու հմտությունների, արժեքների, վերաբերմունքի ձևավորման գործընթացում:

Նպատակից ելնելով՝ առաջադրել ենք հետևյալ խնդիրները.

- Կրտսեր դպրոցականներին առաջարկել իրական կյանքից վերցված խնդիրներ:
- Նախագծել ուսումնական գործընթացը (պլանավորել, ծրագրավորել, հեռանկարներ նախանշել, հաղորդել գիտելիք, մշակել կազմակերպչական ձևեր):

Հետազոտական աշխատանքի գործնական նշանակությունը պայմանավորված է տարրական դասարաններում դասավանդող մանկավարժներին նախագծային տեխնոլոգիան արդյունավետ կիրառելու փորձի փոխանակմամբ:

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Նախագծային տեխնոլոգիայի իրականացման հիմք կարելի է ընդունել սովորողի ակտիվ գործունեությունը՝ հաշվի առնելով սովորողի անձնական հետաքրքրությունները կոնկրետ այդ թեմայի շուրջ: Այս մոտեցումը առավել նպատակային է տարրական դասարաններում աշակերտների մոտ՝ փնտրելու, պրպտելու ջիղը զարգացնելու նպատակն ունենալով: Էական նշանակություն ունի նաև այն, որ սովորողներին առաջարկվեն իրական կյանքից վերցված խնդիրներ, որոնք կարևոր են իրենց համար: Կրտսեր դպրոցականները սկսում են մտածել և տարրորշել, առանձնացնել իրենց շրջապատում կարևոր և անկերևոր երևույթները՝ ձևավորելով հետաքրքրությունների հստակ շրջանակ:

Այս խնդիրների լուծման համար սովորողին անհրաժեշտ կլինի կիրառել ինչպես մինչ այդ ունեցած գիտելիքները, այնպես էլ նոր գիտելիքներ, որոնք նա ձեռք կբերի աշխատանքի ընթացքում:

Սովորողի դերը նախագծային աշխատանքում էապես տարբերվում է. պասսիվ լսողից նա դառնում է ակտիվ մասնակից, հետազոտող, գործունեություն ծավալող: Նա ազատ է գործունեության ձևի ու տեսակի ընտրության մեջ: Տարրական դասարանում սովորողի համար այս մեթոդը թերևս նաև անհատական առանձնահատկություններ բացահայտելու լավագույն խթան է, սկիզբ:

Նախագծի առանձնահատկություններից մեկն էլ աշխատանքի նախնական պլանավորումն է: Ամբողջ ընթացքը՝ սկսած ծագած խնդրից մինչև նախագծի նպատակը, անհրաժեշտ է բաժանել առանձին փուլերի՝ յուրաքանչյուրի համար իրենց ժամանակավոր խնդիրներով, պարզել այդ խնդիրների լուծման միջոցները և դրա համար ռեսուրսներ գտնել, աշխատանքի համար մանրամասն աղյուսակ կազմել, որտեղ նշված լինի յուրաքանչյուր փուլի իրականացման ժամանակը (տեղեկացնել, պլանավորել, լուծել, անցկացնել, հսկել, գնահատել)¹:

¹ Պետրոսյան Հ. Հ., Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, Երևան, <<Ան-Ջոն>>, 2008, էջ 266-268:

Ուսումնական նախագիծն ունի իր իրականացման փուլերը.

1. Հիմնահարցի ձևակերպում
2. Աշխատանքային խմբի (խմբերի) ձևավորում
3. Աշխատանքի բաժանում
4. Խմբերի, անհատների ինքնուրույն աշխատանք
5. հետազոտություն
6. ստացված արդյունքների ընթացիկ քննարկումներ
7. կատարված աշխատանքների ներկայացում
 - նախօրոք որոշվում է ներկայացման ձևը՝ տեսանյութ, ֆոտոշարք, հոդված
8. սովորողների և խմբի աշխատանքների գնահատում
 - գնահատումը կատարվում է ն՝ դասավանդողի, և՛ սովորողների կողմից
 - գնահատվում է յուրաքանչյուր սովորող
 - գնահատվում է ամբողջ խումբը
9. հետագա աշխատանքի ուղիների նախանշում

Նախագծային աշխատանքի պլանի իրականացումը, որպես կանոն, կապված է գրականության և տեղեկատվության այլ աղբյուրների ուսումնասիրության հետ, տեղեկատվության ընտրության հետ: Հնարավոր է նաև կապված է տարբեր փորձերի անցկացման, գիտափորձերի, դիտումների, հետազոտությունների, հարցումների, ստացված տվյալների վերլուծության, եզրակացությունների ձևավորման և դրա հիման վրա ձևավորված սեփական տեսակետի հետ: Նախագծի խնդրի լուծման և գտնված լուծման մարմնավորման համար ստեղծվում է նախագծային արտադրանք: Նախագծային արտադրանքը պետք է ունենա պարզորոշ սպառողական հատկություններ, որոնք էլ բավարարեն խնդրի հանդիպած ցանկացած մարդու պահանջները, որի լուծմանը հենց ուղղված էր տվյալ նախագիծը:

Նախագիծը պարտադիր պետք է ունենա գրված մաս՝ հաշվետվություն աշխատանքի ընթացքի մասին, որտեղ նկարագրված են աշխատանքի բոլոր փուլերը (սկսած նախագծի խնդրի առաջադրումից), նրանց վրա հիմնված բոլոր որոշումները, առաջացած բոլոր խնդիրները, դրանց հաղթահարման միջոցները, վերլուծվում է հավաքված տեղեկատվությունը, գիտափորձերի անցկացումը և դիտումը, ի մի են

բերվում հարցումների արդյունքները, արվում են եզրակացություններ, պարզաբանվում են նախագծի հեռանկարները:

Այսպիսով, ուսումնական նախագիծը ուսուցչի կողմից կազմակերպված և աշակերտների կողմից իրականացվող գործողությունների ամբողջությունն է:

Դասավանդողի դերը նախագծի իրականացման տարբեր փուլերում կարող է փոխվել: Բոլոր փուլերում էլ նա հանդես է գալիս որպես խորհրդատու, օգնական: Նա գիտելիքներ չի փոխանցում, այլ ապահովում է սովորողի ինքնագործունեությունը, այսինքն՝ խորհուրդներ է տալիս, հետևում է ընթացքին, ուղղորդում է: Ուսուցչի համար ուսումնական նախագիծը զարգացման ինտեգրված դիդակտիկ միջոց է, ուսուցում և դաստիարակում, որը թույլ է տալիս զարգացնել նախագծային հատուկ կարողություններ ու հմտություններ՝ խնդրի առաջադրում, նպատակամղվածություն, իրականացվելիք պլաններ, վերլուծություն, ինքնաներկայացում, ինչպես նաև տեղեկատվության որոնում, ակադեմիական գիտելիքների օգտագործում ըստ նշանակության, ինքնակրթություն, հետազոտական և ստեղծագործական գործունեություն:

Ուսուցչի դերը նախագծային մեթոդը կիրառելիս անգնահատելի է հատկապես տարրական դասարանում: Հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները՝ կարծում ենք տարրական դասարանի աշակերտները դեռևս չեն տիրապետում անհրաժեշտ այն կարողություններին, որոնց միջոցով իրականացվում է լիարժեք ուսումնական նախագիծ²:

Տարրական դասարանների առնչությամբ անհրաժեշտ է շեշտը դնել նախագծային գործունեության տարրերի վրա:

Նախագիծը պարտադիր պետք է ունենա պարզ, իրականացվելիք, հասանելիք նպատակ: Տարրական դասարաններում այն պետք է ունենա տարիքային առանձնահատկությանը բնորոշ հետաքրքրության որոշակի շրջանակ:

Տարրական դասարաններում կազմակերպվող նախագծային գործունեության առանձնահատկությունն այն է, որ դրանք անհատական, գույգերով, խմբային, կոլեկտիվ խմբային առաջադրանքներ են, որոնք դպրոցին հնարավորություն են տալիս դասի

² Թունյան Ջ. Ե., Երիցյան Լ. Մ., Կրտսեր դպրոցականի հոգեբանություն, Ուսումնամեթոդական ձեռնարկ, <<Էն-Վե ՓՐԻՆԹ>> Երևան, 2013

ընթացքում կատարվող ուսումնական գործունեությունից անհատապես անցում կատարել զարգացման արդիական փուլից դեպի զարգացման մերձավոր գոտի: Խմբերից յուրաքանչյուրը կարող է աշխատել նախագծային աշխատանքի որևէ մասի, որևէ հարցի, կամ խնդրի շուրջ:

Պրակտիկայում առավել հաճախ օգտագործվում են անհատական և խմբային գործունեության նախագծերի հետևյալ տեսակները.

1. Հետազոտական-ստեղծագործական
2. Դերային-խաղային
3. Տեղեկատվական-կողմնորոշիչ
4. Գործնական-ստեղծագործական-կողմնորոշիչ

Հաշվի առնելով աշակերտների տարիքային առանձնահատկությունները և ցուցաբերելով անհատական մոտեցում, միաժամանակ ստեղծելով ուսուցիչ-աշակերտ համագործակցային մթնոլորտ՝ նախագիծը հնարավորություն է տալիս կատարել դերային բաժանում և աշխատանքի բաշխում:

Նախագծային մեթոդի խնդիրներն էին՝

- Աշխարհաճանաչողական գիտելիքների և հմտությունների զարգացում,
- Գրագետ խոսքի կարողությունների զարգացում,
- Տեղեկություններ հավաքելու և տարածելու հմտության զարգացում,
- Գեղագիտական ճաշակի ձևավորում,
- Ստեղծագործական մտքի զարգացում,
- Աշխատանքների կազմակերպչական հմտությունների ձևավորում,
- Նոր գիտելիքների ձեռքբերում:

Այսպիսով, նախագծային գործունեության մեջ ինքնակրթության և ինքնազարգացման մեխանիզմը գործողության մեջ է դրվում ձևավորված ակտիվ ճանաչողական հետաքրքրությունների և անձի զարգացման մակարդակի միջև առկա հակասությունների միջոցով: Այդ հակասությունը ծնվում է հետաքրքրությունները բավարարելու պահանջից: Նախագծային մեթոդն էլ թերևս նպաստում է հետաքրքրությունների առաջացման և դրանց բավարարման ճանապարհների մշակմանն ու հաղթահարմանը:

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԸ ՏԱՐԲԱՐԱԿԱՆ
ԴԱՍԱՐԱՆՈՒՄ**

Սովորություն դարձրու երբեմն-երբեմն մարդկանց համար բարի գործեր կատարել այնպես, որ նրանք երբևէ չիմանան այդ մասին: Երբեք որևէ մեկին հույսից մի կտրիր, դա կարող է լինել միակ բանը, որ նա ունի:

Ջեքսոն Բրաուն

Մեր երկրում հասարակական զարգացման և գիատեխնիկական առաջադիմության բուռն ընթացքը թելադրեցին հասարակության անդամների և առաջին հերթին արդի սերնդի ուսումնադաստիարակչական մակարդակի հետագա բարձրացման անհրաժեշտությունը: Հասարակական պահանջմունք դարձավ ուսուցման որակի բարելավումը, դպրոցական կրթության բովանդակության համահունչ դարձնելը գիտության, տեխնիկայի արդի մակարդակին ու զարգացման հեռանկարներին:

Աշխատանքը կազմակերպվում է համագործակցային եղանակով, որն ապահովում է ուսման արդյունավետության բարձրացմանը: Աշակերտները ինքնուրույն հետազոտում են տրված հարցը՝ պասիվ ընկալողից վերաճելով հայտնագործողի և գիտելիքների ձեռք բերման ակտիվ մասնակցի: Խնդիրների լուծման, հետազոտման համար նրանք վերաճում են արժեքային համակարգ ունեցող մարդու, ով կունենա ստեղծագործական գործունեություն ծավալելու ցանկություն, պատասխանատվություն, ցանկացած իրավիճակում ակտիվորեն գործելու, որշումներ կայացնելու, դրանք հիմնավորելու ունակություններ: Նախագծային մեթոդը օգնում է հետազոտական կարողությունների զարգացմանը և նշված որակների ձևավորմանը:

Վարկած

Կարծում եմ աշակերտների և ուսուցիչների համատեղ գործունեությունը նպաստում է ժամանակակից ուսումնական խնդիրների լուծմանը առավել արդյունավետ մեթոդներով ու հնարներով, խորացնում է գիտելիքները, հղկում

կարողություններն ու հմտությունները, որոնք սահուն կերպով վերաճում են արժեքային համակարգի:

Թեմա՝ Սյունիքի անձեռակերտ հուշարձանները

Նպատակը՝

- Ուսումնասիրելով սեփական բնօրրանի բնական հուշարձանները՝ կտվորեն նկատել բնության անձեռակերտ հրաշքները:
- Կժանոթանան նոր տեղանուններին, դրանց աշխարհագրական տեղադրությանը, կհարստացնեն արվեստի նմուշները հասկանալու, գնահատելու և ինքնուրույն արժեքներ ստեղծելու ցանկությունը:
- Կհարստացնեն բառապաշարը նոր հատուկ անուններում:
- Կժանոթանան հուշարձանների հետ կապված ավանդազրույցներին, որն էլ ենթադրում է մեծ հետաքրքրության ծնվելուն դեպի հայկական բանահյուսությունը, գիրն ու գրականությունը:

Աշխատելով խմբերով՝ կզարգացնեն խմբային աշխատանքի հմտությունները, կփոխանակեն տեղեկություններ, կդրսևորեն փոխօգնություն:

Աշակերտները կզարգացնեն ինքնուրույն տեղեկություն ձեռք բերելու սեփական գործունեություն պլանավորելու, հետևողական աշխատելու, աշխատանքը վերջնագծին հասցնելու կարողություններ:

Խնդիրները՝

- Աշակերտները պետք է կարողանան նույնիսկ հավաքել Սյունիքի տարածաշրջանի աշխարհագրական տեղանունների մասին:
- Կարողանան որոշել, թե ինչ աղբյուրներից կարելի է օգտվել:
- Ինչպես և ինչով հիվնավորել ձեռք բերած տեղեկությունները:
- Պարզել ինչ հնարավորություններ և կարողություններ ունեն այդ խնդիրները լուծելու համար:
- Ինչպես հավաքագրել տվյալ նյութերը:

Նախագծի տեսակը՝ տեղեկատվական

Այն ենթադրում է ճշտորեն մտածված գործընթաց, որը ներկայացվում է ըստ աշխատանքային պլանի, որտեղ որոշված է յուրաքանչյուր մասնակցի գործառույթը և վերջնական արդյունքի ձևավորման մեջ սովորողի մասնակցությունը:

Սյունիք-աշխարհագրական ակնարկ

Այս տարածքը, որի վրա ձևավորվել է հայ էթնուսը և կերտել իր բազմադարյան պատմությունը կոչվում է Հայք, Հայաստան: Այն գալիս է դարերի խորքից, գտնվում է Ալպ-Հիմալայան գոտում, որն աչքի է ընկնում հրաբխային լեռներով և լավային սարավանդներով: Սյունիքը կազմում է Հայաստանի հարավային հատվածը: Այն հրաբխային բարձրավանդակի և Բաղքի լեռնաշղթայի հյուսիսարևելյան լեռնաբազուկների վրա է: Տեղանքը խիստ կտրտված հրաբխային լեռնազանգվածների, սարահարթերի, լեռնահովիտների, անդնդախոր ձորերի և կիրճերի բարդ համակցություն է:

Աշխատանքի պլանավորում

Աշակերտները բաժանվում են չորս խմբի: Խմբերը հետազոտությունը իրականացնելու համար բաժանվում են ըստ տեղանունների:

Առաջին խումբ - Սատանայի կամուրջ

Այս խմբի աշակերտները պետք է հավաքեն նյութեր Տաթև տանող ճանապարհի եզրին թիկնած Սատանայի կամուրջ հուշարձանի մասին:

Երկրորդ խումբ – Պորտաքար

Այս խումբը պետք է ուսումնասիրի Գորիս-Սիսիան ճամփեզրի Պորտաքար կոչվող հուշարձանը:

Երրորդ խումբ- Լաստի խութ

Այս խումբը հավաքում է տեղեկություններ Լաստի խութի մասին:

Չորրորդ խումբ – Շաքիի ջրվեժ

Այս խումբը հավաքագրում է նյութեր Շաքիի ջրվեժի մասին:

Խմբերին հանձնարարվում է երկու շաբաթյա ժամկետում հավաքագրել տեղեկություններ նշված անձեռակերտ հուշարձանների մասին և ներկայացնել լուսանկարները:

Որոշվեց հետազոտական աշխատանքը ավարտելուց հետո կազմել Սյունիքի քարտեզ՝ ըստ հուշարձանների տեղադրության և կազմակերպել էքսկուրսիա դեպի Շաքիի ջրվեժ:

Աշխատանքը սկսելուց առաջ կազմակերպվեց հանդիպումներ ծնողների, տարիքով մարդկանց հետ, որոնք պետք է իրենց խորհուրդներով, տեղեկություններով և որոշակի գործունեությամբ օժանդակեն և աջակցեն երեխաներին:

Այս փուլի աշխատանքը մեծապես կախված է ուսուցիչ-աշակերտ-ծնող համագործակցությունից:

Այս գործընթացում ուսուցիչն օգնում է ուղղորդում, շտկում աշխատանքները, բացահայտում աշխատանքի հնարավոր ձևերը, նպաստում արդյունքների կանխատեսմանը: Աշակերտը որոնում է, գտնում և պատասխանատու է իր գործունեության համար: Ծնողը օգնում է ձեռք բերել անհրաժեշտ տեղեկությունը:

Ներկայացնում ենք հետազոտության արդյունքները:



Առաջին խումբ — Սատանի կամուրջ

Ժայռը թիկնել էր ժայռի վրա,

Ժայռը նստել էր ժայռի վրա,

Եվ ժայռի վրա նստած լուսին,

Արծաթ եղջյուրն էր փշրում նրա³:

Որոտան գետի ամենախոր կիրճը գտնվում է Տաթև- Հարժիս (700-800մ) հատվածում :

Այդ հատվածում կիրճն այնքան նեղ է, որ անգամ արևի ճառագայթները չեն կարողանում թափանցել նրա հատակը: Կիրճի ամենախոր մասում գտնվում է բնության գեղատեսիլ ու արտասովոր հրաշքը՝ Սատանայի կամուրջը, որի երկարությունը 30 մետր է, լայնությունը 50-60 մ: Այդ կամրջով է անցնում Գորիս-Տաթև ավտոճանապարհը:

Լեռնաղբյուրների ու ժայռերի ճեղքերից թափվող հանքային ջրերը գունավորել են Որոտանի ձորի պատերը վարդագույն, դեղին և կանաչ գույներով:

Այդ հրաշք կառույցը տրավերտիններից կազմված բնական կամուրջ է: Դարեր շարունակ կրաքարային նստվածքները կուտակվելով տարածվել են գետի մի ափից մյուսը, կազմելով հզոր քարե կամար: Կամրջի եզրից կախված են յուրահատուկ շրթաքարեր, իսկ ժայռային սանդղակաձև խորշերից ներքև են թափվում գեղատեսիլ ջրվեժները:



Երկրորդ

Խումբ-Պորտաքար

Սարերով լիքը երկինք,

Երկինքով լիքը ձորեր,

³ Հ. Սահյան, էջ 337:

Հասկերի թուխ ստվերում

Թուխս նստած թխլիկ լորեր:

Պորտաքար, ծիսական քարեր Հայաստանում, կապված են հողի բերրիության, պտղաբերության և մայրության աստծո՝ Անահիտ աստծո, պաշտամունքի հետ:

Նկարագրություն

Այն իրենից ներկայացնում է քարանձավի վերնամասի ժայռաբեկորային մի քանի քառակուսի մետր ողորկ հատվածից դուրս ցցված կոնաձև ելուստ, որին տեղաբնակները անվանում են «պորտաքար»: Ժողովրդական հավատալիքներում հազարամյակներ շարունակ եղել է աշխարհի կենտրոնի և մարդկության առաջացման վայրը: Երկրպագվել է որպես վերարտադրության ու պտղաբերության, բեղմնավորող ուժի խորհրդանիշ:

Ավանդույթ

Ըստ ավանդության ամուլ կանայք այստեղ գալով՝ կատարում են որոշ ծիսակատարություններ, որից հետո պորտով հավելով քարին՝ պտտվում են: Անշուշտ այստեղ ուխտի գալով՝ կանայք հոգեբանորեն բուժվել են, ըստ Սերո Խանգաղյանի «Պորտաքար» պատմվածքի՝ անց են կացրել նաև բուժման այլ արարողություններ:



Երրորդ խումբ-Լաստի խութ

Լաստի խութըը 1535մ, ուղղաձիգ թեքությամբ բուրգի պես վեհորեն կանգնած է քաղաքի հարավային համայնապատկերի վրա: Լաստը Հր. Աճառյանը մեկնում է որպես բնիկ հայերեն բառ՝ փայտ, կոճղ: Հրաբխային ժայթքումից առաջացած սար է, ունի խառնարան, շրջապատված է լավային ծագում ունեցող քարակույտերով:

Սարն առել վրան ծիրանի մի քող,
Ննջում է կարծես ծաղկե անկողնում,
Անտառն արևի բեկբեկուն մի շող
Ծոցի մեջ պահել ու բաց չի թողնում⁴:



Չորրորդ խումբ- Շաքիի ջրվեժ

Ջրագրական բնության հուշարձան Հայաստանի Հանրապետությունում: Գտնվում է Սյունիքի մարզում, Որոտան գետի ձախակողմյան՝ Շաքի վտակի վրա:

Այն գրանցված է Հայաստանի Հանրապետության Բնապահպանության նախարարության բնության պետական հուշարձանների ցանկում: Բնության պետական հուշարձանների ցանկում ներառվել է 2008 թվականի օգոստոսի 14-ին ընդունված

⁴ Հ. Սահյան, էջ 137:

«Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման համաձայն:

Ջրվեժի տեղանքը իրենից ներկայացնում է խորը կիրճ՝ հարուստ ժայռերով և քարայրներով: Դրանցում հայտնաբերվել են մարդու գործունեության հետքեր, ինչպես նաև մոխիր, որը թվագրվում է պալեոլիթի ժամանակաշրջանին: Շաքիի ջրվեժը գտնվում է Որոտանի կիրճում , Միսիանից երեք կիլոմետր դեպի հյուսիս-արևմուտք, Որոտանի վտակ՝ Շաքի գետի վրա: Բարձրությունը տասնութ մետր է:

Ավանդություն

Թշնամիները Գեղարքունի գավառից 93 կույս աղջիկ են ուղարկում Մուղանում բանակ դրած իրենց առաջնորդին: Երբ գերի աղջիկների քարավանը հասնում է այստեղ, դիմելով իրենց առևանգիչներին, նրանք ասում են՝ «Մենք երկար ճանապարհին շատ փոշոտվել ու կեղտոտվել ենք, թույլ սվեք գետում լողանանք, նոր ներկայանանք ձեր մեծին»: Առևանգիչները համաձայնում են: Աղջիկները մերկանալով նետվում են Որոտանի ալիքների մեջ և սուզվելով անհետանում: Միայն Շաքե անունով մի կապուտաչյա աղջիկ Որոտանը թափվող գետակի միջով փախչելով, փորձում է ազատվել: Թշնամիները հասնում են նրա ետևից, սակայն նույն վայրկյանին գետակի մեջ հրաշքով մի ժայռ է խոյանում, և ջուրը նրա վրայով գահավիժելով, իր ճերմակ փրփուրների տակ թաքցնում է Շաքեին: Դրանից հետո այդ ջրվեժն ու նրա մոտ գտնվող գյուղը կոչվում են Շաքեի անունով:

Ուշաթափվել է ջրվեժը ձորում,

Քարափի գլխից ընկել է ներքև:

Ամպերը դարձել գթության քույրեր,

Ջրվեժի գլխին ջուր են շաղ տալիս⁵:

Գնահատում

Ամփովեցին խմբերի աշխատանքները:

Արված նկարներով կազմեցինք քարտեզ՝ Սյունիքի անձեռակերտ հուշարձաններ (տե՛ս հավելված 1):

⁵ Հ. Մահյան, էջ 212:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ավարտելով հետազոտական աշխատանքը՝ հանգել են հետևյալ եզարկացությունների.

- Ուսումնական նախագիծը ուսուցչի կողմից կազմակերպված և աշակերտների կողմից իրականացվող գործողությունների ամբողջությունն է:
- նախագծային գործունեության մեջ ինքնակրթության և ինքնազարգացման մեխանիզմը գործողության մեջ է դրվում ձևավորված ակտիվ ճանաչողական հետաքրքրությունների և անձի զարգացման մակարդակի միջև առկա հակասությունների միջոցով:
- Հաշվի առնելով աշակերտների տարիքային առանձնահատկությունները և ցուցաբերելով անհատական մոտեցում, միաժամանակ ստեղծելով ուսուցիչ-աշակերտ համագործակցային մթնոլորտ՝ նախագիծը հնարավորություն է տալիս կատարել դերային բաժանում և աշխատանքի բաշխում:

Իրականացված հետազոտական աշխատանքում տեսանք, որ զարմանահրաշքություն ունի գողտրիկ անկյուններ, որոնք չեն ստեղծվել մարդու ձեռքով: Դրանք այնքան կախարհող և հրապուրիչ են, որ հրանավոր չէ անտարբեր անցնել դրանց կողքով: Զարմանալի ճարտարապետությամբ ու համաչափությամբ ծնված հրաշքներ են, որոնք եկել են դարերից և չեն կորցրել իրենց գերող հմայքը: Նրանք մնում են խորհրդավոր, իմաստուն և տիեզերական անվերջությամբ շարունակում են օգնել սերունդների, որոնք եկել ու անցել են հավերժի ճամփով:

Մարդը գնացական է, աշխարհը մնացական:

Մեր կարծիքով, այս հետազոտական աշխատանքը ուներ ճանաչողական մեծ արժեք գեղեցիկը ու անկրկնելին տեսնելու կարողության ձևավորման համար: Աշակերտների մոտ արթնացան հայրենի եզերքի մասին ավելին իմանալու ցանկություն: Աշակերտները չվախեցան դժվարություններից, բացեցի և արահետներ տվյալ խնդիրներին անհրաժեշտ լուծումներ տալու: Հետազոտական աշխատանքով

կառուցված դասը կխթանի աշակերտներին դառնալ հնէաբան, երկրաբան, պատմաբան, բանաստեղծ, կկապի ամուր սիրով հարազատ բնօրրանին և այն լքելու մասին երբևէ չեն մտածի:

Երեխաները վեր են ածվում բնության պահապանների և խնամքով ու սիրով են վերաբերվում ամեն թփին, հուշարձանին, ծառին ու ծաղկին:

Կփորձեն իրենք ևս մասնակից դառնալ բնապահպանության սուրբ գործին: Մեր մոլորակը այժմ առավել քան երբևէ ունի բոլորի կարիքը:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ասատրյան Ա. Զ., Տարրական կրթության մանկավարժություն (Ուսումնամեթոդական ձեռնարկ), <<Տիգրան Մեծ>>, Երևան, 2017, էջ 74-75:
2. Թունյան Ջ. Ե., Երիցյան Լ. Մ., Կրտսեր դպրոցականի հոգեբանություն, Ուսումնամեթոդական ձեռնարկ, <<Էն-Վե ՓԲԻՆԹ>> Երևան, 2013:
3. Համո Սահյան, Երկեր երկու հատորով, Առաջին հատոր, «Սովետական գրող», հրատ. Երևան 1984թ.
4. Համո Սահյան, «Տոհմի կանչը», 1981թ.
5. Պետրոսյան Հ. Հ., Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, Երևան, <<Ան-Ջոն>>, 2008:

Մեր կազմած քարտեզը

Սյունիք



Գորիս



Միսիան

